ԴԵՎԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ժամանակով ըլել ա մի թքավոր, սա կարողութին շատ ա ունեցել, վերջը քյասիբացել ա, կերել ա, հատել ա։
Էս թքավորը մի տղա ա ունեցել։ Որ քյասիբացել ա, տղին ասել ա.— Ո՛րդի, հաց ենք ճարում, որ ուտենք, գնամ հարուստ մարդկերանցը խնդրվեմ, բալքի ամենքը մի թայ եզը տան, բերենք վար անենք։
Գնացել ա, ուզել ա, եզ են տվել. Եզների մինը Կարմիր ա ըլել, մինը՝ Սև։
Տզեն խամ ա ըլել, չութ վարած չի ըլել, տարել ա եզները, ֆողումը շատ չալիշ ա ըլել, կարալիս չի ըլել վար անիլ։ Էդ օրը շատ չրչարվել ա, բեզարել ա, եզնիքը թողել հանդումը, էկել տուն։
Ռավոտը գնացել տեհել, որ Սև եզը կորել ա։ Էկել ա հորն ասել.— Թքավորն ապրած կենա, եզն անց մինը կորել ա։
Թքավորն էլ ասել ա.— Էս օղբաթ էր, որ իմ գլխին բերիր, գնացի միննաթ արի, եզը բերի, դու տարար բրախեցիր, կորավ։
Տղեն շատ նեղացավ, նամուսը կորավ, ասավ.— Էս ի՞նչ բան էր, որ էլավ, ուզովի բան էր, ծիծաղատեղ դառանք, թե՝ «Կարացին ոչ մի լուծ եզը պհեն»։
Սա միտքն արավ, միտքը, մի մենձ գուդա կար, մեջը մի հաց գրավ, ասավ.— Պետք ա ես էլ յա էդ եզան եդնա կորչեմ, յա գտնում։
Ճամփա ընկավ, գնաց։ Թե շատ գնաց, թե քիչ գնաց, մի մենձ ծմակի դեմ էլավ, ծմակովը գներ, տեհավ մի մենձ գըռգռուն ա գալի դըբա իրան։ Սա անկաճ դրուց, վախեցավ էս ձենիցը. Մի ծառի տակին նստած էր, ասավ.— Սա, ինչ որ ա, կգա ինձ կուտի, վեր ըլիմ էս ծառին։
Ծառին վեր էլավ։ Տեհավ հրես մի ջանով Դև ձիու վրա, էկավ ու որդի ինքը ծառի վրեն էր, էկավ ու էդ ծառի տակին կաղնեց։ Սա մտիկ արավ ծառի վրիցը, որ Դևը ձիու վրիցը վեր էկավ, ծառի տակը փորեց ու մի զատ պհեց։ Եդ ձիուն վեր էլավ, գնաց։
Սա ծառի վրիցը վեր էկավ, ասավ.— Ի՞նչ պհեց, մի տենամ՝ էն ի՛նչ էր։
Ծումբ էր վրեն դրել, վի կալավ, տեհավ մի մենձ բնալի։ Բնալիքը վեկալավ ու էն ձիու իզը բռնեց գնաց, ասավ.— Էս Դևը շենլիկ կունենա, գնամ տենում։
Գնաց գտավ շենլըկնին։
Ասավ.— Տենում էս բլանիքը էդ դուռը բա՞ց ա անում։
Բաց արավ տուն մտավ, իրեք աչքը օթաղ էր իրուր մեչը, տեհավ իրան Սև եզի կաշին դրսի կռան օթախումը։
— Ըհը՛,— ասավ,— իմ եզան կաշին գտել եմ։
Վերի աչքումը մի թքավորի լայեղ աղջիկ նստած ա.— Ա՛յ տղա,— ասավ աղջիկը,— էդ ի՞նչ տղա ես, ի՞նչ հնարով էս դուռը բացիր, տուն էկար։
Տղեն ասավ.— Ես եզան ման գեի, էկա ֆլան ծմակումը գեի, տեհա, որ մի Դև գալիս ա, վախելուց ծառը վեր էլա, էկավ ու ծառի տակին էս բլանիքը պհեց, ես ծառի վրիցը տեհա։ Նա եդ գնաց, ես ծառեն վեր էկա, ժաժ տվի էն պահած տեղին, տեհա բլանիք ա, վեկալա, էն ձիու իզով էկա, էս տունը գտա։
— Որ ըտենց սիրուն տղա ես ու ըտենց հունար ունես, դա ինձ բերել ա, ես Արևլուսի թքավորի աղջիկն եմ, բերել ա էս նեղ տեղը դրել ա, ոչովի տենում չեմ, ինքը օրը մի հետ գալիս ա, ինքը օր քնում ա, վե կենում, գնում։ Արի դու էս ութ օրը իմ կշտին կաց, եդը ես քեզ շատ փող կտամ,

կերթաս, բնալիքը էլեթ իրան տեղը կդնես, որ եդ գա, դուռը բաց անի, թե չէ նրա ձեռիցը զադ չի կորչիլ, քեզ կգտնի, կտոր-կտոր կանի։
Էդ տղեն ըտի ութ օր մնաց, իրենց քեֆն արին, որ էքսը Դևը գալ պտեր, սա էս տղի գուդեն ոսկով լքցրուց, ճամփու դրուց, ասավ.— Բլանիքը որդիան որ վեր ես կալե, տեղը կդնես։
Սա տարավ ու բլանիքը իրան տեղը դրուց, համա նա աջ էր դրել, սա ձախ դրուց, գնաց իրան տուն։
Գնաց. հերը ասավ.— Աղբատխեր, գնացիր էսքան վախտ խի ուշացար, եզն ի՞նչ արիր։
Ասավ.— Եզը գտա, փըլան Դևը, փըլան սարի քամակում տարել մորթել էր, կաշին գտա։
Թե.— Բա ի՞նչ արիր,— ասավ։
Գուգեն լիքը վեր դրուց աղաքին, թե.— Թքավորն ապրած կենա, ըսենց եմ արել։
Տեհավ, որ բոլում փող ա բերել։ Էդ փողովը իրանց էլեթ դըզեցին։ Էս տղեն ղոչաղացավ, հերը թքավորութենից դուս էր ըլել, բերին տղին թքավոր դրին։ Հըմի կառավարում ա էդ քաղաքը։
Էտ էտ ա ըտի մնա, հմի խաբարը տանք Դևիցը։
Դևը ինն օր ման էկավ, էկավ, որ տուն գնա, էկավ բնա լիքի կուշտը, տեհավ, որ բնալիքը ժաժ ա տված, իրան դրածը չի։
— Էս բլանիքը,— ասավ,— իմ դրածը չի, կա-չկա գնացել են դուռը բաց արել, գնամ կնկանս հարցնեմ։
Գնաց դուռը բաց արավ, տուն մտավ, թուրը հանեց, կնկանն ասավ.— Ըստի մարդ ա էկել, ասա, թե չէ մենձ թիքադ անկաջդ կթողամ։
Կնիկն ատկազ էլավ։ Շատ ետևաց, էլավ ոչ, կնիկը բոյինը չկալավ։
Ջզրվեց, ասավ.— Էս տուն մտնողը պետք ա գտնում, երկնքի վրեն էլ ըլի, գետնի տակ էլ ըլի, գտնուլ պտիմ, տենամ էն վախտը ինչ պատասխան պտես տա։
Դուս էկավ ու դսի կոնից դուռը փակեց, ընկավ երկիրը՝ ման ա գալի գեգից-գեղ, քաղաքները, որ գտնու։ Թե շատ ման էկավ, թե քիչ, վերջը էկավ էդ քաղաքը։
Էկավ էդ քաղաքը, «Մութ ա, որդի վեր գամ, որդի վեր չգամ, ուր ղոնախ ըլիմ»։
Տեհավ առաջը ամարաթնի կա։ Ասավ.— Գնամ ըտի վեր գամ։
Գնաց ու վեր էկավ էդ դռանը։ Էն ծեր թքավորը դռանն էր։
Ասավ.— Ինձ ղոնաղ վեկալ։
Նա էլ ձին տուն քաշիլ երետ, վեր էկավ օթախը ասավ թե.— Համեցե՛ք, տուն գնանք։
Ասավ.— Չէ՛, մխելի սեհր անենք դռանը, եդնա կերթանք։
Ասավ.— Դու ի՞նչ մարդ ես։
Ասավ.— Ես թքավոր ի, հմի դուս եմ ըլել, տղես ա թքավոր։ Ասավ.— Թքավորն ապրած կենա, բազում հարստութին ունես, տներդ լավն ա։
Սա սկսեց իրան գլխի էկած նաղլն անել։ Ասում ա.— Հին կարողութինս փչացրի, քյասիբացա, էնքան քյասիբացա, որ գնացի հարուստ մարդկերանցե եզը ուզեցի, էրկու եզը տվին, մինը կորավ, տղես ընդուր եդնա դնաց, որ գտնու, ըսե մի ծմակում տենում ա, որ մի Դև մի բլանիք ա պահում, էն բլանիքը վեր ա կալել ու ձիու իզովը գնացել մի ամարաթ, ընդի մի Հողածին աղջիկ մի գուդա ոսկի ա լքցրել, տվել իրան, էս էն փողով ենք հըմի կառավարվում։
Սա հարցրուց թե.— Հմի էդ փող բերող տղեն ո՞րդի ա։
Թե.— Նա էլ թքավոր ա նստած, դիվան-խանումն ա, հմի կգա։
Էկավ թքավորը, բարովեցին, նստեցին, հաց կերան, զրից արին, ռավոտը լիսացավ։
Դևն ասավ.— Ինձ ճամփու գձի, ես գնալու եմ։
Նա էլ թե.— Ճամփեն էն ա, գնա՛։
Նա էլ թե.— Աչքիս դիր ես էկել, արի հետս մի քիչ զրից անելով կերթանք, եդնա ետ կըդառնաս։

Թքավորի տղեն Դևի հետ գնաց։
Որ դենն անցկացավ, ասավ.— Դե՛ գնաս բարով։
Նա ընդի թուրը հանեց ու ասավ.— Քանի վախտ ա ես քի ման ի գալի, անճախ գտա, ձիուս աղաքին գնա, չքել էն ծառը, որտեղից բլանիքը վեր էս կալել, թե չէ՝ թիքա-թիքա կանեմ։
Քշեց տարավ. Ահուցը կարաց ոչ մի բան էլ անի էս մարդը։
Քշեց տարավ բլանիքը որդիան որ վեր էր կալե՝ ընդի։ Թե.— Բլանիքը որդիան էս վի կալել, ասա՛, քի ո՞վ շանց տվուց։
Թե բա.— Ես ծառի վրա ի, որ դուն վերնուց էկար, ըտի պըհեցիր ու եդ դառար։ Ես եդնա ծառիցը վեր էկա, վիկալա բլանիքը, ձիու իզովը գնացի գտա ամարաթը, դուռը բացի, ութ օր մնացի թքավորի ախչկա կուշտը, եդնա գուդես ոսկով լքցրուց, գնացի։
Ընդիան քշեց տարավ իրան ամարաթը, դուռը բաց արավ։ Տեհավ կնիկը՝ հրես տղին բերում ա, որ էս տեհավ կնիկը, վախիցը պռոշը ճաքեց։
Դևը ասավ.— Ասա՛ ինչ որ արել ես, դյուզգյունը ասա։
Կնիկը կարաց ոչ պատասխան տա։ Իրեք անգամ ասավ։ Վերջը կնիկը միտք արավ. «Որ ասեմ էլ, չասեմ էլ, պտի սպանի, լավն էն ա՝ ասեմ»։
Ասավ.— Աստծանե թաքուն չի, քեզանե ի՞նչ թաքցնեմ, էկավ էդ տղեն, ինձ պես ֆողեղեն էր, աչքիս դուր էկավ, սիրեցի, ոտն արի։
— Դե որ,— ասավ,— իրար սիրել եք, ու ոտն ես արել, դուք ձեր մեղքիցը դուս էկաք։ Էրկու ձի իրան թավլուցը դուս բերուց, էրկու եզնախուրջին ոսկով լքցրուց, ամեքը մի ձիու վրա գցեց, կնկանն ու էն տղին դուս բերուց, ամենքին մի ձիու վրա դրուց։
Ասավ.— Տերը ձեզ հետ ըլի, որ սիրել եք իրուր, գնացեք վայելեցեք, ես էլ կերթամ, հըմի էլ Արևմտի թքավորի ախչիկը կբերեմ։
Էս տղեն ու կնիկը շնորհակալ էլան Դևիցը, էկան իրանց քաղաքը, ըտի օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, կերան, խմեցին, քեփ արին։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։ Չարին ընդի, բարին ըստի։
Աստուծանե իրեք խնձոր վեր էկավ. մինն՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ ալում աշխարքին։